ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1842-22 առ. "16" 08 2022թ.

Ձեր №_____ առ. "___" _____ 2022թ.

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Լ.Մաթևոսյանին
E-MAIL:SATURN90@MAIL.RU

[Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-32/22-3-01/054 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար յուղերի (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ փետրվարի 10-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-32/22-3» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 1,4,9,11,12,13, և 15-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի միջև 2022թ. մարտի 24-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-32/22-3-01/054 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 5520558 (հինգ միլիոն հինգ հարյուր քսան հազար հինգ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 15-րդ չափաբաժնով սահմանված 500լ յուղ հիդրավլիկ ՎՄԳՋ, որի ընդհանուր գինը կազմում է 691500 (վեց հարյուր իննսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, «Ժակ և Գոռ» ՍՊԸ -ի կողմից մատակարարվել է պայմանագրի պահանջների խախտմամբ:

Համաձայն Պայմանագրի՝

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»;
- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն»;
- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի

պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր»:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի հետ 2022թ. մարտի 24-ին կնքած թիվ 01/054 պայմանագիրը 15-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով կկիրառվեն պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը:

Գլխավոր տնօրենի տեղակալ-
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս.Մաթևոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60